ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱՑՄԸ

ԴԱՍ 10

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

ԴԱՍ 10

ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ կարդացեք դասի տեսական մասը՝ օգտվելով բառարանից, և այն յուրացնելուց հետո միայն պատասխանեք ինքնաստուգիչ հարցերին:
Այս աշխատանքների համար անհրաժեշտ է մոտ 210 րոպե:

Արդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքները երաշխավորված են հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի համար, իսկ կյանքի, անվտանգության և ազատության դեմ ուղղված հանցագործություններով տուժողների և վկաների շահերը պաշտպանված են Եվրոպական կոնվենցիայի մյուս դրույթներով: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը հստակ չի պահանջում ապահովել վկաների, այդ թվում՝ նաև հարցաքննության կանչված վկաների շահերը, այնուամենայնիվ, նրանց կյանքը, ազատությունը կամ անվտանգությունը կարող է ենթակա լինել պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով (1):

Եվ չնայած վկաների և տուժողների պաշտպանության անհրաժեշտությունը կարող է բխել կոնվենցիոնալ այլ դրույթներից, այդուհանդերձ, 6-րդ հոդվածի իմաստով արդար դատաքննության սկզբունքները պահանջում են կոնկրետ իրավի-

ճակներում պաշտպանության կողմի շահերը հավասարակշռել հարցաքննության կանչվող վկաների և տուժողների շահերի հետ: Մասնավորապես, արդար դատաքննության իրավունքի առանձնահատուկ կարևորությամբ պայմանավորված՝ այն պահանջում է, որ պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակումները կարող են կիրառվել, եթե խիստ անհրաժեշտ են, և նվազ խիստ սահմանափակումները նախընտրելի են, եթե բավարար են անհրաժեշտ նպատակին հասնելու համար (2):

Դրա հետ մեկտեղ վկաների պաշտպանության, վերջիններիս կողմից ճնշումներից անկախ արժանահավատ ցուցմունքներ ստանալու անհրաժեշտությունը ենթադրում է հարցաքննության ընդհանուր կանոններից շեղում և նույնիսկ առանձին դեպքերում վկայի (տուժողի) և ենթադրյալ հանցանք կատարած անձի առերեսման բացառում:

Ընդհանուր առմամբ, որպես առերեսման բացառում նշվում են՝

1. անանուն ցուցմունքների օգտագործումը.
2. հոգեբանական աջակցության համար ուղեկցող անձի ներկայությունը.
3. քողարկում, ձայնի աղավաղում.
4. դատաքննական ցուցմունքների փոխարինումը նախաքննական ցուցմունքներով.
5. տեսակապի միջոցով հարցաքննությունը.
6. ամբաստանյալին կամ հանրության ներկայացուցիչներին դատական նիստերի դահլիճից հեռացնելը (3):



Ուշադրություն դարձրեք ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի կիրառելիության շրջանակին:

Մտապահեք առերեսման բացառմանն աջակցող այս միջոցները:

Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է անհրաժեշտ վկաների ինքնությունը թաքցնելը և ո՞ր դեպքերում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի գնահատմամբ՝ վկայի/արդարադատության հետ համագործակցող անձի կողմից տրված ապացույցներն արդյունավետորեն վիճարկելու կողմերի իրավունքն իրացնելիս կարող են օգտագործվել առնվազն հետևյալ միջոցները, որոնք ուղղված են վկայի/արդարադատության հետ համագործակցող անձի ինքնությունը թաքցնելուն.

- նախնական քննության փուլում վկայի/արդարադատության հետ համագործակցող անձի կողմից տրված ցուցմունքների տեսաձայնագրումը.
- նախնական քննության փուլում տրված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելը, երբ վկան/արդարադատության հետ համագործակցող անձը չի կարող ներկայանալ դատարան կամ դատարանը ներկայանալը կարող է իրական և լուրջ վտանգ ներկայացնել վկայի/արդարադատության հետ համագործակցող անձի կամ նրա մերձավորի համար: Նախաքննական ցուցմունքները կարող են թույլատրելի ապացույց լինել, եթե կողմերն ունեն կամ ունեցել են հարցաքննության մասնակցելու և հարցաքննելու (հակընդդեմ հարցման ենթարկելու) վկաներին և վարույթի ընթացքում վիճարկելու ցուցմունքի բովանդակությունը.
- վկային նույնականացնելու հնարավորություն ընձեռող տվյալները թաքցնելը մինչև վարույթի հնարավորինս ուշ փուլերը կամ միայն ընտրված տվյալները տրամադրելը.
- բացառել կամ սահմանափակել լրատվության միջոցների և հանրության ներկայացուցիչների մասնակցությունը դատական նիստերին կամ դրանց մի մասին.
- վկաներին կամ արդարադատության հետ համագործակցող անձանց ինքնությունը թաքցնելու հնարավորություն ընձեռող սարքերի օգտագործումը, ինչպիսիք են՝ էկրաններ ու վարագույրներ օգտագործելը, վկայի դեմքը քողարկելը կամ ձայնն աղավաղելը.
- տեսակապի օգտագործումը (4):

Անանուն վկաների հարցաքննության առումով որոշակիորեն հետաքրքրական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը: Եվրոպական դատարանի կողմից այս հարցին առանձնահատուկ ուշադրություն հատկացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև ցուցմունք տալը վկայի (տուժողի) պարտականությունն է, այդուհանդերձ, այդ պարտականությունը չի կարող իրացվել ի հաշիվ անձի կյանքի կամ առողջության: Սակայն մյուս կողմից՝ անանուն վկաների օգտագործումը մրցակցության մեջ է մտնում պաշտպանության կողմի իրավունքների հետ: Մասնավորապես, վերջին դիտարկման հետ կապված՝ Եվրոպական դատարանի մոտեցումն այն է, որ առանց հարցաքննության կանչվող անձ ինքնությունը պարզելու անհնար է, օրինակ, վեր հանել այն բոլոր տարրերը, որոնք կարող են ապացուցել, որ վկան կանխակալ վերաբերմունք ունի կամ ոչ վստահելի է: Եթե հարցաքննության ժամանակ վկայի դեմքը ծածկված է, ապա պաշտպանության կողմը և դատարանը չեն կարող հետևել վկայի վարքագծի կամ դեմքի արտահայտություններին և օգտագործել նշված տարրերը վկայի արժանահավատության մասին իրենց եզրահանգումները կառուցելիս (5): Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ սա լուրջ դատավարական խոչընդոտ է, որի հետ բախվում է մեղադրյալը, որն անհամատեղելի է Եվրոպական կոնվենցիայի հետ, եթե պատշաճ կերպով չի հավասարակշռվում այլ երաշխիքներով (6):

Ծանոթացեք անանուն վկաների հարցաքննությանը վերաբերող ՄԻԵԴ-ի պրակտիկային:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի գնահատմամբ՝ նվազագույնը երկու պահանջ է նախատեսում վկայի ինքնությունը չբացահայտելու համար, այն է՝ վկայի կյանքը կամ ազատությունը պետք է լրջագույնս վտանգված լինի և վկան պետք է ապահովի իր վստահելիության և արժանահավատության երաշխիքներ (7): Եվ այս առնչությամբ Եվրոպական դատարանը պետք է պատշաճ քննութ-

յուն իրականացնի՝ պարզելու համար, թե արդյոք առկա են վկայի վախի համար օբյեկտիվ հիմքեր (8):

Մրցակցող շահերը հավասարակշռելու այս խնդիրն ավելի է սրվում, երբ խոսքը վերաբերում է գաղտնի միջոցառումների մեջ ներգրավված ոստիկանության աշխատակիցների կամ գործակալների անանունությունն ապահովելուն: Խնդիրն այն է, որ այս դեպքում մի կողմից՝ պետք է ապահովվի ոստիկանության աշխատակցի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունը, կառավարության հնարավորությունն ապագայում այդ նույն աշխատակցին ներգրավելու գաղտնի միջոցառումների մեջ (9), սակայն մյուս կողմից՝ նրանց կարգավիճակը նույնական չէ այն տուժողի կամ վկաների, առավել ևս չշահագրգռված վկաների հետ՝ գործադիր մարմիններին ենթարկվելու իրենց պարտականության և դատախազության հետ ունեցած անխուսափելի կապերի ուժով: Նույնիսկ այս դեպքերում, վկայի ինքնությունը չբացահայտելը պետք է բավարարի համաչափության ապահովման պահանջին, և պետք է երաշխավորվի, որ վկայի պաշտպանության նպատակը կարող է իրացվել պաշտպանության կողմի իրավունքները նվազ սահմանափակող միջոցի կիրառմամբ (10), ինչպիսիք են, օրինակ, կրկնվող դիմակների կամ պաշտպանիչ էկրանների օգտագործումը, որոնք կարող են թույլ տալ խուսափել մեղադրյալի և դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց հետ տեսողական շփումից (11):

Ընդ որում, ուշագրավ է այս հարցի առնչությամբ Եվրոպական դատարանի այն մոտեցումը, որ վերջինս չի արգելում գաղտնի վկաների օգտագործումը մինչդատական վարույթում՝ խնդրահարույց համարելով անանուն վկաների ցուցմունքների թույլատրելիությունը դատական քննության փուլում (12): Խնդիրն այն է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ապացույցը պետք է ներկայացվի մեղադրյալին հրապարակային դատաքննության ընթացքում այն հակընդդեմ հարցման ենթարկելու նպատակով: Սակայն սա չի նշանակում, որ վկաների ցուցմունքները պետք է տրվեն դատարանում որպես ապացույց օգտագործելու համար, այնուամենայնիվ, մեղադրյալին պետք է տրվի բավարար և պատշաճ հնարավորություն հերքելու ցանկացած հակառակ դիրքորոշում և հարցաքննել վկաներին ցուցմունք տալու ժամանակ կամ ավելի ուշ փուլերում:

Հատուկ վկայակոչման կարիք ունի Եվրոպական դատարանի (Մեծ պալատի) այն դիրքորոշումը, որ չնայած անանուն և բացակա վկաների խնդիրները նույնական չեն, սակայն այս իրավիճակները սկզբունքորեն տարբեր չեն, քանի որ որոշակիորեն սահմանափակում են պաշտպանության կողմի իրավունքը (13)։ Եվ այս առնչությամբ մոտեցումն այն է, որ այս դեպքում ևս կիրառելի է Ալ-Քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի դիրքորոշումը, որով զարգացվել են նաև մինչ այդ նախադեպային իրավունքում մշակված չափորոշիչները։ Ինչ վերաբերում է այդ չափանիշներին, ապա դրանք վկայակոչված են ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Աշոտ Ղուլյանի* գործով որոշման մեջ, և հանգում են հետևյալին.

«– վկայի չներկայանալու համար պետք է առկա լինի հիմնավոր պատճառ, այսինքն՝ դատարանը պետք է ունենա հիմնավոր փաստական և իրավական հիմքեր՝ դատական քննությանը վկայի ներկայությունն ապահովել չկարողանալու համար։ Կան մի շարք պատճառներ, թե ինչու վկան չի կարող մասնակցել դատական քննությանը, օրինակ՝ վկայի մահվան, վրեժխնդրության վախի, վկային հայրենաբերելու անհնարինության կամ այլ պատճառներով։ Ընդ որում, այս սկզբունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծում է, որ նույնիսկ եթե ենթադրվի, որ դատական նիստի ժամանակ վկաներին չհարցաքննելու համար չեն եղել հիմնավոր պատճառներ, ապա դրանց բացակայությունն ինքնին չի կարող վկայել քրեական վարույթի անարդարացիության մասին,

- եթե անձին մեղավոր ճանաչելու հիմքում բացառապես կամ հիմնականում դրվել են այն անձի ցուցմունքները, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ որը հարցաքննության չի ենթարկվել նախնական քննության կամ դատաքննության ընթացքում, ապա պաշտպանության կողմի իրավունքները կարող են սահմանափակվել այնքան, որ դա անհամատեղելի կլինի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (այսպես կոչված՝ «միակ կամ վճռորոշ կանոնը»)։ Այդ համատեքստում որպես «միակ» պետք է հասկանալ մեղադրյալի դատապարտման հիմքում դրված միակ ցուցմունքը, իսկ «վճռորոշ»-ը պետք է հասկանալ այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունքը, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար,

- պետք է ուսումնասիրվի հակակշռող բավարար գործոնների առկայությունը, ինչպես օրինակ՝ մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը և դատաքննության ժամանակ վկաներին ուղղակիորեն խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցները: Ընդ որում, այդ գործոնների առկայությունը պետք է ուսումնասիրվի ոչ միայն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել անձին դատապարտելու համար, այլ նաև այն գործերում, որոնցում դատարանը չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է սահմանափակել է պաշտպանության կողմի միջոցները» (14)*:*

Մեկ այլ՝ Ռազմիկ Հախվերդյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այն հարցին, որ վկայի՝ դատական քննությանը ներկայությունն ապահովելու համար դատարանի կողմից պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր: Կոնկրետ գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև որոշակի քայլեր դատարանը ձեռնարկել է վկա Է.Ղամբարյանին գտնելու և նրան հակընդդեմ հարցման ենթարկելու համար, սակայն հնարավոր բոլոր միջոցները չեն ձեռնարկվել: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է. *«(...) [Հ]աշվի առնելով, որ վկայի մայրը նշել է որդու՝ Ռուսաստանի Դաշնությունում գտնվելու հանգամանքը, դատարանը միջոցներ չի ձեռնարկել նրան հարցաքննելու միջոցով որդու գտնվելու վայրը հստակեցնելու ուղղությամբ: Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնության՝ Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 1993թ.-ի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի հիման վրա, որի մասնակից են և՛ Հայաստանը, և՛ Ռուսաստանը: Ավելին, անհրաժեշտության դեպքում, Առաջին ատյանի դատարանը կարող էր դի-*

մել միջազգային իրավական օգնության նաև 1959թ.-ի ապրիլի 20-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին Եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև վերաբերելի այլ միջազգային իրավական փաստաթղթերի շրջանակներում» (15)*:*

Ինչ վերաբերում է այս առնչությամբ միջազգային փորձին, ապա, օրինակ, Գերմանիայում իրավապահ մարմնի աշխատակիցը դատարանում վկայի փոխարեն ցուցմունք է տալիս՝ պատմելով, թե վերջինս ինչ է տեսել: Պաշտպանության կողմն իրավապահ մարմնի աշխատակցի ներկայացրած ցուցմունքները վիճարկելու իրավունք ունի: Բացի այդ, պաշտպանության կողմն իրավունք ունի գրավոր հարցեր փոխանցել անանուն վկային իրավապահ մարմնի աշխատակցի միջոցով, ով այդ հարցերի պատասխանները ներկայացնելու է դատարան: Արդարադատության Դաշնային Դատարանը սահմանել է, որ իր ածանցյալ բնույթով պայմանավորված՝ այս ցուցմունքը սահմանափակ նշանակություն ունի, քանի դեռ չի հաստատվել այլ ապացույցներով (16):

Վկայի վրա ճնշումները նվազեցնելու միջոցներից էկրանների օգտագործումը ևս վիճելի է և գործնականում շատ դեպքերում կարող է չկիրառվել այն պատճառով, որ բացառում է մեղադրյալի՝ վկայի հետ առերեսվելու, մեղադրյալի դեմքի արտահայտությանը հետևելու և դրա հիման վրա ցուցմունքների արժանահավատությունը վիճարկելու հնարավորությունը: Հնարավոր լուծում է դիտարկվում այն, որ էկրաններն օգտագործելու դեպքում չպետք է բացառվի դատավորի, երդվյալ ատենակալների և կողմերից յուրաքանչյուրի մեկական ներկայացուցչի կողմից վկայի դեմքը տեսնելը (17): Օրինակ, Ճապոնիայում էկրանն օգտագործվում է այն եղանակով, որ թույլ է տալիս պաշտպանին տեսնել վկային (18):

Միջազգայնորեն որպես վկաների պաշտպանության լավագույն փորձ դիտարկվում է վկաների պաշտպանության ծրագրերի առկայությունը, որոնք իրենցից ներկայացնում են պաշտոնական գաղտնի ծրագրեր՝ ընդունելության խիստ չափանիշներով, և որը թույլ է տալիս փոխել այն վկաների արտաքինը և բնակության վայրերը, ում կյանքը վտանգված է հանցավոր խմբերի կողմից իրավապահ մարմինների հետ համագործակցելու պատճառով (19):

Անդրադառնալով այս առնչությամբ ներպետական կարգավորումներին, թերևս պետք է հիշատակել ազդարարների պաշտպանության ներպետական մեխանիզմները և քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցները:

Ուշադրություն դարձրեք ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձի պաշտպանության առանձնահատկություններին:

Այսպես, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածն ամրագրում է ազդարարի անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունքը (2-րդ մաս), ընդ որում՝ պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունքը տարածվում է նաև ազդարարի հետ փոխկապակցված անձի վրա, եթե ողջամտորեն հիմնավորում է, որ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով իր դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ: Նույն օրենքի 11-րդ հոդվածը հատուկ կարգավորում է նաև ազդարարի անձնական տվյալների պաշտպանությունն անանուն հաղորդում ներկայացնելիս՝ նշելով, որ անանուն հաղորդում ներկայացնելիս երաշխավորվում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումն ինչպես իրավասու մարմնին, այնպես էլ այլ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարը բացահայտում է իր անձնական տվյալները: Իրավասու մարմինն իրավունք չունի միջոցներ ձեռնարկելու անանուն հաղորդում ներկայացրած ազդարարի անձնական տվյալները բացահայտելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված

պաշտպանության միջոցներին, ապա թերևս վերոնշյալ մոտեցումների շարքում կարելի է առանձնացնել 98.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը, պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը, պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը, դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը, դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

Իհարկե, պետք է նկատել, որ պաշտպանության այս միջոցներից, օրինակ, պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը, պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը դատավարական առումով խնդիրներ կարող է չառաջացնել պաշտպանության կողմի իրավունքների, մասնավորապես, հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման տեսանկյունից՝ ի տարբերություն, օրինակ, այն դեպքերի, երբ պաշտպանվող անձը դատարանում հարցաքննվում է առանց ինքնության մասին տվյալների հրապարակման, կամ երբ կիրառվում է ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 98.13-րդ հովդածի 3-րդ մասով նախատեսված կարգավորումը, որը թույլ է տալիս պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց դատավարության մյուս մասնակիցների ակներև տեսանելիության, կատարել տեսաձայնային և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ՝ դատավարության սահմանափակ

շրջանակով մասնակիցների մասնակցությամբ՝ գաղտնիության պահպանման մասին նախազգուշացումով:

Ինչ վերաբերում է ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներին, ապա ՀՀ քրեական դատավարության նոր օենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի (սույն գլխում այսուհետ՝ պաշտպանվող անձ) նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամտորեն կարող է սպառնալ իրական վտանգ»:* Իսկ նույն օրենսգրքի 74-րդ հոդվածը նախատեսում է պաշտպանության հետևյալ միջոցները.

1. պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը,
2. պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը,
3. պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը,
4. պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը,
5. պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը,
6. պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը,
7. պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը,
8. դատական նիստերի դահլիճից հեռացումը կամ դռնփակ դատական նիստի անցկացումը,
9. դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

Այս կարգավորումների առումով ևս հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման հետ առավելապես առնչվում են պաշտպանության այն միջոցները, ինչպիսիք են պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը, պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը, դատական նիստերի դահլիճից հեռացումը կամ դռնփակ դատական նիստի անցկացումը, դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

Խնդրահարույց այս իրավիճակներում իբրև ուղենիշ պետք է ծառայի Եվրոպական դատարանի որդեգրած՝ պաշտպանության կողմի իր դեմ ներկայացված ապացույցները վիճարկելու համարժեք և բավարար միջոցներ տրամադրելու ընդհանրական գաղափարը:

ՀՂՈՒՄՆԵՐ

Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար

1 Եվրոպական դատարանի՝ Van Mechelen and others v. The Netherlands գործով վճիռ, գանգատ թիվ 21363/93, 23 ապրիլի 1997, 54-րդ կետ,
https://www.legislationline.org/documents/id/17310
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

2 Եվրոպական դատարանի՝ Van Mechelen and others v. The Netherlands գործով վճռի 58-րդ կետը,
https://www.legislationline.org/documents/id/17310
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Delcourt v. Belgium գործով վճիռ, գանգատ թիվ 2689/65, 17 հունվարի 1970, 25-րդ կետ,
https://www.legal-tools.org/doc/5e02c9/pdf/
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

3 Karen Kramer, Witness protection as a key tool in addressing serious and organized crime,
https://www.unafei.or.jp/publications/pdf/GG4/Fourth_GGSeminar_P3-19.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

4 Council of Europe, Committee of Ministers, Recommendation, Rec(2005)9 of the Committee of the Ministers to Member States on the Protection of Witnesses and Collaborators of Justice, 17-րդ կետ,
https://www.coe.int/t/dg1/legalcooperation/economiccrime/organisedcrime/Rec%20_2005_9.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

5 Եվրոպական դատարանի՝ Van Mechelen and others v. The Netherlands գործով վճիռը, գանգատներ թիվ 21363/93, 21364/93, 21427/93 և 22056/93, 23 ապրիլ 1997, 59-րդ կետ,
https://www.legislationline.org/documents/id/17310
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Windisch v. Austria գործով վճիռը, գանգատ թիվ 12489/86, 27 սեպտեմբերի 1990, 28-29-րդ կետեր,
http://surl.li/bfngr
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Kostovski v. The Netherlands գործով վճիռը, գանգատ թիվ 11454/85, 20 նոյեմբերի 1989, 42-43-րդ կետեր,
http://surl.li/bfngs
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

6 Եվրոպական դատարանի՝ Van Mechelen and others v. The Netherlands գործով վերը հիշատակված վճռի 54-րդ կետ,
https://www.legislationline.org/documents/id/17310
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Doorson v. The Netherlands գործով վճիռ, գանգատ թիվ 20524/92, 26 մարտ 1996, 72-րդ կետ,
https://www.hr-dp.org/files/2013/09/08/CASE_OF_DOORSON_v._THE_NETHERLANDS_.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

7 Council of Europe, Committee of Ministers, Recommendation No. R(97) 13 to Member States Concerning Intimidation of Witnesses and the Rights of the Defense,
https://polis.osce.org/council-europe-committee-ministers-recommendation-no-r97-13-member-states-concerning-intimidation
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);

Recommendation No.Rec(2005)9 of the Committee of the Ministers to Member States on the Protection of Witnesses and Collaborators of Justice,
https://www.coe.int/t/dg1/legalcooperation/economiccrime/organisedcrime/Rec%20_2005_9.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

8 Եվրոպական դատարանի՝ Al-Khawaja and Tahery v. The United Kingdom գործով վճիռը, գանգատներ թիվ no 26766/05 և 22228/06, 15 դեկտեմբերի 2011, 124-րդ կետ,
https://justice.org.uk/al-khawaja-tahery-v-united-kingdom/
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Krasniki v. The Czech Republic գործով վճիռ, գանգատ թիվ 51277/99, 28 փետրվարի 2006, 80-83-րդ կետեր,
https://www.legal-tools.org/doc/d5d392/pdf/
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

9 Եվրոպական դատարանի՝ Lüdi v. Switzerland գործով վճիռը, գանգատ թիվ 12433/86, 15 հունիսի 1992,
https://www.hr-dp.org/contents/630
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Van Mechelen and others v. The Netherlands գործով վերը հիշատակված վճիռը, 57-րդ կետ,
https://www.legislationline.org/documents/id/17310
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Calabrò v. Italy, գանգատ թիվ 59895/00, 21 մարտ 2002,
https://www.deepdyve.com/lp/brill/calabr-v-italy-and-germany-3iWCVD9pWP
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

10 Եվրոպական դատարանի՝ Van Mechelen and Others v. The Netherlands գործով վերը հիշատակված վճիռը, 58-րդ կետ,
https://www.legislationline.org/documents/id/17310
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

11 Եվրոպական դատարանի՝ Teixeira de Castro v. Portugal գործով վճիռը, գանգատ թիվ 25829/94, 9 հունիսի 1998, 38-39-րդ կետեր,
https://www.hr-dp.org/files/2013/09/10/CASE_OF_TEIXEIRA_DE_CASTRO_v._PORTUGAL_.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

12 Եվրոպական դատարանի՝ Kostovski v. The Netherlands գործով վերը հիշատակված վճիռը, 44-րդ կետ,
http://surl.li/bfngs
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

13 Եվրոպական դատարանի՝ Rozuecki v. Poland գործով վճիռը, գանգատ թիվ 32605/11, 11 սեպտեմբերի 2015, 53-րդ կետ,
http://surl.li/bfnhg
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Ellis, Simms and Martin v. The United Kingdom, գանգատներ թիվ 46099/06 և 46699/06, 10 ապրիլի 2012, 78-րդ կետ,
https://hudoc.echr.coe.int/eng?i=001-110787
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

14 ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Աշոտ Ղուլյանի գործով 2018թ.-ի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0037/01/15 որոշման 17.1-ին կետը,
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321733881
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

15 ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ռազմիկ Հախվերդյանի գործով 2019թ.-ի դեկտեմբերի 20-ի թիվ ՏԴ2/0043/01/17 որոշման 16.1-ին կետը,
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321744646
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

16 Council of Europe, Terrorism: Protection of Witnesses and Collaborators of Justice. Strasbourg, Council of Europe Publishing, 2006, UNODC Good Practices, էջ 39,
https://www.unafei.or.jp/publications/pdf/GG4/Fourth_GGSeminar_P3-19.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

17, 18 UNODC, Good Practices for the Protection of Witnesses, էջ 35, https://www.unafei.or.jp/publications/pdf/GG4/Fourth_GGSeminar_P3-19.pdf *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

19 UNODC Witness Protection Good Practices manual, էջ 5, https://www.unafei.or.jp/publications/pdf/GG4/Fourth_GGSeminar_P3-19.pdf *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

ԱՆԱՆՈՒՆ ՎԿԱ — Վկա է, որի ինքնությունը չի բացահայտվում մեղադրանքի կողմից կամ հանրությանն ընդհանրապես:

ՀԱԿԱԿՇՌՈՂ ԲԱՎԱՐԱՐ ԳՈՐԾՈՆՆԵՐ — Հակընդդեմ հարցման իրավունքի բացակայությունն է հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցները:

ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՐՑՄԱՆ (ԿՈՆՖՐՈՆՏԱՑԻԱՅԻ) ԻՐԱՎՈՒՆՔ — Անձի՝ իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունքն է:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԱՆՁ — Հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձն է կամ ցանկացած անձ, որը դատապարտվել է հանցավոր համագործակցության կամ ցանկացած այլ տեսակի հանցավոր միավորման մասնակցելու կամ կազմակերպված հանցավորության համար, բայց ով համաձայնվել է համագործակցել քրեական արդարադատության մարմինների հետ՝ հանցավոր համագործակցության կամ հանցավոր միավորման կամ կազմակերպված հանցավորության հետ առնչվող կամ այլ ծանր հանցանքների մասին ցուցմունքներ տալու եղանակով:

ՄԻԱԿ ԿԱՄ ՎՃՌՈՐՈՇ ՑՈՒՑՄՈՒՆՔԻ ՄԿԶԲՈՒՆՔ — Ամբաստանյալի դատապարտումն է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց անձը չի կարողացել հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում:

ՎԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ — Վկայի պաշտպանության ընդհանուր և անհատական միջոցառումների համակարգ է: